

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Տր.

Վեցամսեայ 6 Տր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւրակի ծրարով

Տարեկան 14 Տր.

Վեցամսեայ 7 Տր.

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2.60 Տոյար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԵԻԿ

Դանուցման տողը

20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇՈՒԲԱԹ

ՀԱՍՏ

Rédaction du Journal

«Iraounk»

VARNA (Чл. 1816)

Редакция

на ВѢСТНИКЪ

«Ир вунк»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ

սրտիք

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ԿՈՒՋԷՔ ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ ԾԻԱ-
ԽՈՏ ԾԻԱԸ. ԽՆԴՐԵՑԷՔ ԱՄԵՆ
ՏԵՂ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՒ ԸՆԿԻ
ԾԻԱԽՈՏ. ԳԼԱՆԻԿՆԵՐԸ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսկաստան հրճուանքի մէջ է, Շահին խոստացած սահմանադրութիւնը բոլոր պարսկահպատակները, նոյն իսկ արտասահմանի մէջ, ուրախացուց, Բողոքող կրօնաւորները՝ որոնք հոս հոն ապաստանած էին, մեծ հանդիսաւորութեամբ վերադարձան տեղերը, Լուսավառութիւններ ու հրախաղութիւններ կը լաւան ամեն կողմ. Պարսկաստանէն դուրս ալ մանաւանդ Կովկասի մէջ պարսիկ հիւպատոսները բոլոր իրանահպատակներու մասնակցութեամբ կը տօնեն Մուշաֆէրէտտին Շահի տուած սահմանադրութիւնը, հայ հոգեւորականներն ալ պարսկահպատակ հայերու հետ կերթան մասնակցիլ պարսիկ հիւպատոսներու շուրջ կատարուող տօնախմբութեան:

Ըմբոստ համարուած և այդ պատճառաւ աքսորուած հոգևորականները վերադարձած ըլլալով, կը մասնակցին երկրի խըրախճանութեանց, Ամսոյս 6 ին թէհրանի մէջ տեղի ունեցաւ աքսորէ վերադարձած բարձր հոգևոր գասուն ներկայութեամբ Մէհլիսի-Շուրայի Միլլիի (Աղգային Խորհրդարան) ժողովատեղիին շինութեան հանդիսաւոր բացումը. Շահը հոգեւորականները երեք օր կը հիւրասիրէ իր պալատին մէջ թէյով և անուշիկներով. Ասով անգամ մըն ալ կը արեւելամանայ վեհապետը երէկի բողոքող հոգևորականութեան հետ, այս վերջինը հրաժարած իր մոլեռանդութենէն կը նկերակցի հասարակ ժողովուրդին և երկրին մէկ ծայ-

րեն միւսը կը սկսի տարածուիլ եղբայրութեան, Հաւասարութեան և Ազատութեան գաղափարը:

ԿՐԷՏԷ

Կրէտէն Յունաստանի հետ միացնելու խնդիրը յամառօրէն կը յուզուի յոյն աշխարհի մէջ. Կղզիին բարձր գոմիսէր իշխան Եօրկին իր բոլոր դիմումներուն գոհացում չը գտնելով քաջուցաւ կրէտէն հրաժարելու ըստպառնալիքին տակ, յայտարարելով ռուս հիւպատոսին, թէ Կղզիին պաշտպան պետութիւնները իրեն հանդէպ հեքնական վարմունք մը ունեցան, ռուսի իրեն արքայազուն իր արժանապատուութիւնը վիրաւորուած զգալով, կը հեռանայ պաշտօնէն:

Բայց Աթէնքէն ստացուած նորագոյն տեղեկութիւն մը կը հաւաստէ, թէ պետութիւնները Յունաստանի թագաւորին իրաւասութիւն տուած են իր յարմար դատած անձերէն Կրէտէի կառավարիչ առաջարկելու իշխան Եօրկին իբր յաջորդ:

Սակայն առաջարկելը անուանել պէտք չէ հասկնալ. Յունաստանի թագաւորը գաւտիտա պիտի կրնայ ցոյց տալ, ոչ թէ պաշտօնի կոչել, ինչ որ կրնէ իր երկրի ո՛րէ մէկ նահանգին կառավարիչը ընտրելու համար:

Աթէնքէն կիմացունեն նաև թէ իշխան Եօրկին վերջնականապէս հրաժարելով չէ մեկնած Կրէտէն, այլ արտասահման ճամբորդութիւն մը ընելու նըպատակաւ, որմէ յետոյ դիպի աշուն պիտի վերադառնայ իր տեղը:

Այս ամենի հետ միասին, կրէտական խնդիրը դեռ առկա կը մնայ, և Կղզիին բնակիչներուն մէկ մասը նոր յեղափոխութեան մը պատրաստութիւնը կը տեսնէ:

ՌՈՒՍԻԱ

Նախարարապետ Սթոլիբինը չը կրցաւ ժողովրդականութեան ունեցող կուսակցութեան մը աշակցութիւնը իրեն ապահովել: Սթոլիբին աշխատեցաւ «Հոկտ. 17» անուն կուսակցութիւնը ձեռք առնել, անոր պետերուն նախարարական 2-3 անդամներ խոստանալով, բայց այդ պետերէն կոմս Հէյտէն և Մ. Լըվոֆ անկարող գտնուեցան այդ առևտուրը կատարելու, քանի որ իրենց ետեւ իրապէս կուսակցութիւն մը չըկար. այդ կուսակցութիւնը անուանական մնացած էր իր ընդունած խիստ պահպանողական սկզբունքներուն պատճառաւ, և հետեւեալը նախարարապետը վերջին պահուն անսաւ թէ իր տալիք աթոռներուն փոխարէն այդ կուսակցութիւնը ուժ մը չը կրնար բերել կառավարութիւնը ղորացնու, և բանակցութիւնը անհետեւեք մնաց:

Այդ «Հոկտ. 17» անուն կուսակցութեան պետերը իրենց ապիկարութիւնը տեսնելով, կուսակցութեան ծրագրին քանի մը կետերը փոխեցին դէպի ազատականութեան հակելով. այսինքն Սահմանադրական ռամկավարական ուժեղ կուսակցութեան սկզբունքներէն մէկ քանին գողցան, որով կառավարութեան և այս կուսակցութեան միջև միջին ճամբայ մը բռնած եղան, բայց այս ճամբան ալ ապահովապէս զիրենք չպիտի կրնայ բաղձացեալ զօրութեան հասցնել, և մեծ ժողովրդականութիւնը պիտի մնայ միշտ Սահմանադրական - ռամկավարական կուսակցութեան:

Վերադառնալով կառավարութեան, սա պիտի ստիպուի կամ բոլորովին յետադիմականները իրեն ընկեր առնել և կամ ասպարեզը թիկտատորութեան մը ձգել, արդէն կը խօսուի կոմս Իքնադիէվի թիկտատորութեան մասին:

Օտեսայէ օգոստոս 17 թուով կը գրեն «Սթանտարտին», թէ շաբթուան մը մէջ 27 խանութներ կողոպտուեցան աւազակներէ որոնք «համայնական անիշխանականներ» կանուանուին: Հինգ մարդ սպաննուեցան և 23 վիրաւորուեցան: Մօլդովանքա արուարձանին մէջ բոլոր գիշերը վեցհարուածներու ձայներ կը լսուին և առանց ոստիկանութեան միջամտութեան կանցնին: Արգէն ոստիկանութիւնը մեծապէս կը զգուշանայ կռիւներէ: անիկա յեղափոխականներու հետ համաձայնած է, կամ աւելի անոնցմէ սպառնալիք ընդունած, ինչ որ բնաւ զարմանալի չէ, Վարչաւայի մէջ ոստիկանութեան պաշտօնեաներու կոտորածէն յետոյ: Փողոցներուն մէջ չեն շրջի իր ոչ խաղախներ և ոչ զինուորական պահապաններ:

Մօսովլսքայի զինուորական ամարանցին մէջ (Օտեսայի մօտ) 11 և 12րդ զօրագունները ըմբոստացան անցեալ հինգշաբթի, միթինկ գումարեցին Մարսէլէզը երգեցին և որոշեցին չը հնազանդիլ իրենց տրուելիք հրամաններուն յեղափոխականներու դէմ կրակ ընելու համար. Սպաներ ալ ներկայ եղած են այս միթինկին:

ԱՐԱԲԻԱ

Վերջին տասնեակին գամիսներու մէջ 50,000է աւելի զօրք փոխադրուեցաւ Եգիպտոսի ապստամբութիւնը զսպելու համար. բայց այդ խեղճ զինուորները մեծան տարափսփիկ հիւանդութիւններէ կամ ապստամբեցան ռուստի չգալութեան պատճառաւ եւ կամ իրենց կարողութենէն վեր յոգնութիւններու հետեւանօք:

Կուէին սկիզբէն ի վեր, 30,000 զօրք մեծան հիւանդութենէ, 20,000 պատերազմին գաշտին վրայ ինկան եւ շուրջ 20 գունդ պահեստի զինուորներ Սուրիոյ եւ Միջագետքի բանակէն ապստամբեցան, որովհետեւ Արաբ ըլլալով չուզեցին պատերազմիլ իրենց եղբայրներուն դէմ: Ճիշտ է թէ ապստամբութիւնը չը պիտի հասնի Թուրքերը ծովը նետելու աստիճանին, ասոնք Կարսի ծովի

ամբողջական տեղի պիտի մնան . բայց միշտ պատերազմի գրու թիւնը պիտի չարունակուի եւ որ ուրիշ արգիւնք չպիտի ունենայ բայց եթէ օտար պետութեանց միջամտութիւնը :

Զմեռնայն արուած հեռագիրներ կիսացնեն թէ այդ նաւահանգիստին մէջ զինուորներ նաւ կը դրուին իբր թէ Մակեդոնիա դրկուելու , բայց ընդհակառակը դէպի Եգիպտոս կառավարուին :

Նոյնպէս բնաւ տարօրինակ չէ որ օսմանեան զօրքը նախ մէջ ալ ապստամբի ցամաք չհլաւ . ինչպէս վերջին անգամ պատահեցաւ Էրզրումի նոբելի զինուորներուն : Երբեմն այս ըմբոստութիւնները ապստամբութեան կը հասնին ինչպէս Մենէպոյի մէջ եղաւ , որ թուրք եւ ալպանացի եօթը զօրագուններ ջնջուեցաւ թիւզանթաքի մօտ : Զօրքերը իրենց զինուորական պայմանագրով լրացուցած ըլլալով , անցեալ տարուին ի վեր ի գուր կը պահանջէին իրեն թողուցը եւ հայրենիք վերադարձը : Անոնք կը սպառնային Արարներու կողմ անցնել : Ֆէյզի փաշա զանոնք կոտորել տուաւ :

Մահմուտ Եահեա ապստամբակեան պատեհ առթիւնքու սպասելու մտքով իր լաւագոյն պատերազմիկներուն հետ իւր մայրաքաղաքը քաշուեցաւ : Միեւնոյն ատեն իր զօրաց մէկ մասը կը կեդրոնանայ Մարիպի մէջ , համարական բանակին նոր ձախորդութիւններ պատրաստելով :

Միջպետքի մէջ զօրաց շարժումը կը շարունակուի դէպի Պաղտատ եւ դէպի Պասրա պատրուակելով պարսկա-թուրք վեճը : Սակայն տեղական Արարները , մասնաւորապէս Շամարցիները որոնք վեց տարի ասկէ առաջ Հայերուն պէս քաղաքացեան Բիւրսեքէ կանոնաւոր զօրաց աջակցութեամբ , կը վախճամ թէ այս զինուորական արշաւանքը իրենց դէմ պատրաստուած ըլլալ : Անոնք զէնքի դիմած են այժմ եւ պատրաստ կը սպասեն խօսք մէկ ընելու կեդրոնական Արարի իրենց ազգակիցներուն հետ :

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ԱՒԱԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ



ՄԱՆԹԸ

(Շար. նախորդ թիւէն)

Ու կրօնաւորը առաջնորդեց զինքը կողքին հարաւակողմը գտնուող հսկայ , վիթխարի ու ժիւ ապառաժներու մէջ , ուր մատուռ մը կար Ա. Աստուածածին անուանով :

— Նստի՛նք հոս , նկատել տուաւ Աւաղակապետը : Շատ զմայելի է հովուն տնտեսանքը :

Բարձրագիւր ու կանաչ խոտերով չըջապատուած ժայռի մը վրայ նստեցան երկուքնալ եւ պահ մը սկսան նայիլ անհուն ու հրաշագեղ ալիքներուն , որոնք իրարու ետեւէ ժայռին կը զարնուէին :

Յետոյ , կրօնաւորը չը կրնալով իր հոգեւոր անզուսպ հետաքրքրութիւնը

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՁԻ

Ազգ. երկսեռ վտրժարանաց եւ մանկապարտէզի աշակերտներուն մտքարձանագրութիւնք պիտի կատարուին ամսոյս 20էն սկսեալ մինչեւ սեպտեմբեր 3 , ամեն առաւօտ ժամը 8—12 , Ազգ. խորհրդարանին մէջ :

Մտքը կամ պաշտպանք կը հրաւորուին ստանալու իրենց զաւակաց մտքը արասեագիրը նշանակելով ժամանակամիջոցին մէջ :

Դասախօսութիւնք կանոնաւորապէս պիտի սկսին սեպտեմբերի 4ին :

Հոգաբարձութիւն Ազգ. երկսեռ վար.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի մէջ թուրք կամ թաթար ամբարձու աւաղակապետներու եւ խաներու առաջնորդութեամբ կը շարունակէ իր աւաւերը , թէեւ շատ տեղ կը պատմուի թէ զօրքէն թէ հայէն :

Մշակէ կը քաղենք հետեւեալը Արեւմտահայ կոիւնները Սիսիանում : Յունիսի մէկից Սիսիանում թուրք գիւղերի ընկերները ինչ որ պատրաստութիւններ էին տեսնում . լուրեր են պտտում , թէ Ղարաբաղից , Ղափանից , Մաղաւուից շատ թուրքեր են եկել . քոչւորների ու տեղացիների հետ միանալու եւ յարձակում պիտի գործեն հայ գիւղերու վրա :

Հայերը լուրջ կերպով պատրաստվում էին գիւղացիներու այդ անկողն հիւրերին : Յունիսի 2-ին Իլդրի-բէգը , իր օրդին Շամիրի հետ , 200 ձիաւորով գալիս է Շաքի թուրք գիւղը եւ կազմակերպում է մի քանի հարիւրեակ խմբի . Շաքիի իւզբաշու եւ մի քանի ղեգերի ղեկավարութեամբ , քոչւորներից ու տեղացի գիւղերից միացած , Վաղուգի , Հըրլըզ , Շաքի , Շուքար , Վերդի , Փուլ , Արեւքու գիւղերից : Իսկ քոչւորների մէջ Ավդուլ-բէգովների օրաներում պատրաստվում էին միւս խմբերը , յայտնի աւաղակապետ Մուրթուզի եւ Սիբիրից

խեղդել , թոթովեց .

— Ահա՛ վերն Աստուած ու վարը մենք ենք . բարեկամ , ճիշտը խօսեցէ՛ք , դուք Ֆաքիր մը չէ՛ք , դուք տէրվիչներուն չէ՛ք նմանի . . . Ըսէ՛ք յայտնեցէ՛ք ինծի ձեր ո՛վ ըլլալը :

Աւաղակապետը չը պատասխանեց : Անոր լայն ճակատը միջցաւ , աչքերը լեցուեցան ու գէմքն բովանդակ արտայայտութիւնը ստուերով մը ծածկուեցաւ :

— Ի՞նչու կը լռէք , յարեց կրօնաւորը : Մի՛ կասկածիք , ես սեւ օձ մը չեմ ձեր գէմը . . .

— Ինչպէ՞ս կըլլայ որ կը կասկածիք իմ ֆաքիր վիճակէս , թոթովեց Աւաղակապետը :

— Որովհետեւ ա՛յն հոգեկան արտայայտութիւնը , որ պատկերուած է ձեր կերպարանքին վրայ , ապացոյց է թէ այս վայրերը , այս ծովը , այս աւերակ աշխարհը կապ մ'ունեն ձեր սրտին հետ . . . ապացոյց է թէ դուք անոնք կը սիրէք եւ ձեր հոգին կ'ը տառապի քայլերուդ ներքեւ թափուած արիւնի վրայ նայելով :

Աւաղակապետը զողզոլով ոտքի կեցաւ ու իր գէմը գտնուող կրօնաւորին երեսը նայեցաւ եւ բացազանջեց հայերէն լեզուով .

բախաց Արիւլ բէգի , Մանաֆի եւ միւս բէգերի ղեկավարութեամբ Միանուագ յարձակվում են մի քանի գիւղերի վրա : Մագրայի նախրի վրա են յարձակվում , բայց գլխիկոր յետ փախչում , մագրեցի կտրիճների ձեռքի ջուրը խմելով : Բնուենիս , Թագագիւղ Ալիլլու նոյնպէս յետ մղուեցին : Այդ անաջողութիւնից գրգռված թուրք բէգերը , հաւաքեցին իրանց ուժը եւ խառնիճաղանձ քաղմութեամբ յարձակվեցին 50—60 տուն ունեցող Ղալաջուղի վրա , որ հիմնայապաւ անեն : Թուրքերի խորհուրդը իմանալով Բագարչայի ժողովանիւրը , իմաց են տալիս զայնպիսի զորութիւն : Վերջիններս յայտնում են սուրհանդակով մօտիկ հայ գիւղերին՝ Անգեղակոթ , Շաղաթ , Մագրան , Բալաք եւ միւս գիւղերին : Իսկոյն օգնութեան են հասնում կըտրիճ երիտասարդների խմբերը , այն ժամանակ , երբ թշնամին մտնում է գիւղ . թշնամին ընկնում է երկու կրակի մէջտեղ , լաւ քաղք ուտելով յետ է փախչում , շատ զոհերով , հայերը ազատում են գիւղի բնակիչներին եւ ապրանքը մի կողմից , իսկ միւս կողմից կ'ուտալիս . թուրքերը փախչում են , մերոնք հալածում մինչեւ «Աթահա-գարանի» վերի մասը : Թշնամու մի մասը թագնված է լինում «Աթահա-գարանի» ձորում , (մերոնք այդ չեն նկատում) որտեղից դուրս գալով եւ մերոնց չըջապատելով՝ սկսում է տաք կ'ուտ , որը տեսնում է Յ ժամ : Այդ ժամանակ Ղարաքիլիսայի կողակները հասնում են օգնութեան . եւ փամփուշտ տալիս մերոնց (արանց փամփուշտ համարեալ թէ վերջացած էր եւ աւելի մեծ ջարդ ստանալով թուրքերը՝ փախչում են , թողնելով շատ զիւկներ՝ 50—60 մօտաւորապէս : Մեր կողմից եղան 17 զոհ եւ վիրաւոր . զիւկները բերւած են . պատանի Ստեփանի մահը շատ խորը խոցեց մեր սրտերը , պատանին 17 տարեկան էր , սովորում էր Բագում , միւսները—Սահակ 23 տ . Մանուչար . Վարդան , Յարութիւն , Սրգօ , Մկիլ , Ուաչօ , Չամչեան , եւ ուրիշներ :

Ղալաջուղը բոլորովին այրված է , ընտանիքները գիւղերում բաժանված :

— Այո՛ , այս վայրերը , այս ծովը մէկ խօսքով՝ այս աւերակ աշխարհը սրտիս հետ կապ մ'ունեն , որովհետեւ կեանք տուած են ինծի . . . ու կը սիրեմ զանոնք , որովհետեւ անոր վրայ թափուած արիւնն՝ իմ եղբոր արիւնն է . . .

— Ո՛հ , գիտցայ որ դուք մահմետական մը չէ՛ք , շեշտեց կրօնաւորը՝ խղզուած ճիգով մը : Բայց ի՞նչու համար այդ տարազը , ընտրած էք . . . միթէ՞ ուրիշ կերպով չէ՛ք կրնար ծագուել :

— Հոգ չէ՛ : այս տարազը միայն մարմինս կրնայ ծածկել . սակայն հոգիս անկասկանա՞ք է :

— Իրա՛ւ է , ասուկից բան մը չըլլար : Ես ընկեր մ'ունեմ . անիկայ կը պատմէ թէ Վարդապետ մի՛նչե՛ր ըրած է քանի մը տարիներ առաջ . . . մինչեւ որ կոտորածին զոհ գացեր է :

— Հո՞ս է ձեր ըսած ընկերը :

— Այո՛ :

— Կը խնդրեմ , եթէ կարելի է , կանչեցէ՛ք հոս :

— Ամենայն սիրով , թոթովեց կրօնաւորն ու ժայռէն իջնելով արագ արագ հեռացաւ :

Աւաղակապետը խորին մտածման մը մէջ թաղուեցաւ : Ո՞վ էր արդեօք այդ

վնասը տասնեակ հազարների է հասնում : Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն հասցնել :

Թուրք գիւղացիները փախչում են սարերը , քոչւորների մօտ Դրութիւնը շատ վատ է , թուրքերը սպասում են նոր օյժի Արաքսից :

Արդէն հունձի ժամանակը մօտենում է , բայց ինչպէս դաշտ դուրս գալ գիւղացին հունձ անելու . քանի որ սա . . . ինչ մօսինի գնդակը վզվալով գալիս է՝ դէպ իրան : Ուսկայի է . . .

Ամաղղ գաւառում հոգ չը կայ . հասկերը լաւ չեն այս տարի սոյլ է սպասվում Սիսիանում , մանաւանդ շատ մարդիկ չեն վարել , ցանել : Յորենը շատ սակաւ է , ունեցողն էլ շատ թանդ է ծախում . պուտը 1 ր . 60 կ . —1 ր . 70 կ . ցարին 1 ր . ապրանքը նոյնպէս շատ թանդ է : «Ախ Աստուած ջան , քեզ մատաղ . ճար արա եթիմներիս , քաղցած են արբը» , — մրմնջում է գիւղացին առ Աստուած : ԹԱՌՈՒԼ

ԷՍԻԼԻԱՆԹՕ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԼԵՁՈՒ

Միջազգային լեզուի մը պէտքը , որով իրարու հետ կարողանան հաղորդակցիլ աշխարհի զանազան ազգերն ու ժողովուրդներ , վաղուց զգալի էր եղած Պաքոնի , Տեքարդի , Փասկայի , Լայպնիցի եւ Լոքի նման բաղմամբիւ աշխարհահռչակ անձնաւորութեանց : Դարերու այս ընդհանրական բաղձանքը իրականացած ըլլալ կ'սրբել այսօր «Էսաբէրանթօ» կոչուած նոր լեզուին հնարածման ու ընդհանրացմամբը :

Բուս բժիշկ մըն է միջազգային այս նոր լեզուն կերտողը , Տր . Զամէնօֆ : Մնած ըլլալով գաւառի մը մէջ , ուր չորս տարեքաղ զգայնութեանց պատկանող ու տարբեր լեզու գործածող հասարակութիւններ քով քովի կ'ապրէին առանց զիրար հասկնալու , Տր . Զամէնօֆ խորեցաւ հնարել հասարակաց լեզու մը որով իրարու հետ հաղորդակցիլ ու համակրական յարաբերութիւններով իրարու հետ կապուիլ կարողա-

անձը . . . ո՛ր վարդապետին համար խօսած էր :

Կը մտածե՛ր . . . Կէս ժամ ետքը կրօնաւորին հետ կախահասակ , մտայն կերպարանքով , տփոյն ու գոռու մօրուքով մարդ մը ժայռին վրայ ելան :

Աւաղակապետ մէկէն իմէկ ճանչցաւ : Վանականին սիրելի Մոնթն էր ան : — Նստեցէ՛ք , Ըսաւ Աւաղակապետը :

Կրօնաւորն ու Մոնթն նստեցան : Մոնթն հայերէն խօսող այդ խորհրդաւոր ֆաքիրին կերպարանքը գիտեց , անոր ձայնին արտասանութիւնը նկատի առաւ , անոր յաղթ կազմուածքը վերէն ի վար չափեց . . . բայց չը կրցաւ ինչել :

— Դուք վարդապետի մը մասին պատմութիւններ ըրած էք ձեր ընկերոջ , ընդհանրեց Աւաղակապետը . կը հաճե՞ք յայտնելու թէ ի՞նչ էր այդ վարդապետին անունը . . . ու՛ր տեսած էք զինքը . . . եւ թէ ի՞նչ առթիւ սպաննուած է : Իհարկէ , կը վստայիք ինծի , անանկ չէ՛ք :

Մոնթն տփուեցաւ ու մէկէն իմէկ չը կրցաւ պատասխանել : Հարցումը՝ զոր ուղղած էր իրեն այդ անձնաթ մարդը , խորրդաւոր ու միանգամայն

նային այս տարբեր ազգայնութիւններն Այս մասին իր կատարած աշխատութիւններու արդիւնքը 1887ին հրատարակեց «Տր. Էսթրանթո» կեղծանունին տակ. նոր լեզուաւ «Էսթրանթո» կը նշանակէ Յունացող, Եւ ինչո՞ւ ամբողջ աշխարհի հարիւրաւոր այս լեզու ժողովուրդներուն ալ միջեւ հաղորդակցութեան միջոց մը չլլար Էսթրանթոն:

Լաւ ընդունելութիւն գտաւ Էսթրանթոն նախ Րոսիոյ մէջ եւ յետոյ ալ Նորվեգիա ու Շուէտ, Աւելի վերջը Ֆրանսա ներմուծուեցաւ Մ. Պօփոսկի եռանդուն քանից չորսիւ: Ֆրանսայէն անցաւ Գերմանիա, Աւստրիա, Զուիցերիա, Իտալիա եւ վերջապէս Անգլիա, ուր Էսթրանթոյանց 30 ընկերութիւններ կազմակերպուեցան մէկ տարուան մը միջոցին: Էսթրանթոյանց թանկանքները չափքն մէջ այսօր կը համարուին մեծանուն գիտնականներ, լեզուաբաններ ու հրապարակագիրներ: Զայն ուսանելու համար 22 տարեբեր լեզուներով գրքեր հրատարակուած են ցարդ: Այժմ 25 թիւթեր կը հրատարակուին Էսթրանթո լեզուաւ, որոնց մին գիտական է ամբողջովին: Մի քանի եւրոպական թերթեր Էսթրանթո լեզուով յօդուածներ կը հրատարակեն պատահաբար կամ կանոնադրապէս: Էսթրանթոյանց ակումբներ կան գրեթէ ամէն քաղաքակրթ երկրի մէջ: Բարեգի մէջ միայն Էսթրանթոյի 45 գասթընթացքներ աւանդուեցան նախորդ ձմեռ, ուր 3000 չափ անդամակցութիւն մը ունի Էսթրանթոյան մէկ քըւպը: Այս լեզուին յարողներու եւ զայն տարածողներու թիւը բաւական մեծ է նաեւ Մարսիլոյ, Լիօնի, Պառիսի, եւ Լապրի նման քաղաքներու մէջ: Ոչ միայն ակումբներու մէջ կ'աւանդուի միջազգային այս նոր լեզուն, այլ նաեւ կարծիք մը հանրային գաղափարներու մէջ, եւ վերջերս Գործաւորական Միջազգային Բոնկրէտը քուէարկեց խնդրել կառավարութիւններէն որ հանրային գաղափարներու դասընթացքին մէջ տեղ տրուի Էսթրանթո լեզուն ուսուցմանը: Մի քանի առեւտրական դպրոցներ արդէն իսկ ներմուծած են զայն իրենց դասընթացքին մէջ, եւ Տիֆոն համալսարանին մէջ իրիկուան դաս մըն

է հաստատուած այս լեզուն ուսուցմանը: Անգլիոյ մէջ թղթակցութեամբ Էսթրանթոն սովորեցնելու միջոցով որոշեցուած է: Անգլիոյ շատ քան միջազգային այս նոր լեզուն գիտողներուն թիւը որ կրասի թէ, իրենց մայրենի լեզուն զատ Էսթրանթոյի միայն գիտողներ կրցած են ճամբորդել եւրոպայի ամեն կողմերը առանց լեզուի կողմանէ մեծ զճառարութիւն կը յայտնուի: Էսթրանթո լեզուաւ ծանուցումներ հասարակ քանիք են այժմ եւրոպայի մէջ: Մինչեւ իսկ անցեալ Սեպտեմբերին Լոզանի մէջ գումարուած իրաւագիտութեան Միջազգային Բոնկրէտի Էսթրանթո լեզուաւ ուղերձ մը տուաւ տիեզերական խաղաղութեան քաջածառքով Եւրոպայի միջոցով: Մ. Մօշ: Պէտնի զանազան միջազգային պաշտօնէութեանց վարիչներն լրջօրէն կը խորհին Էսթրանթոն որդեգրել իրենց պաշտօնական լեզուն իրենց թղթակցութեան: Մի քանի առեւտրական տուններ արդէն իսկ սկսած են այս լեզուաւ ընդ իրենց միջազգային հեռագրական հաղորդակցութիւններն: Կոյրերու համար իսկ ընթերցանութեան գրքեր պատրաստուած են Էսթրանթո լեզուաւ:

Բայց ոչ ինչ այնքան ցայտուն կերպով երեւան քեզաւ միջազգային նոր լեզուն կատարելա լրջօրէն, որ քան Էսթրանթոյանց Բոնկրէտը որ 1905 Օգոստոս 5-13ին գումարուեցաւ Պառիսի մէջ: Այս համագումարին մասնակցող 1200 պատգամաւորներն եկած էին 22 տարբեր երկրներէ եւ կոչին ամբողջ շաբաթ մը խօսակցիլ, երգել, ճառել, վիճաբանիլ, սրախօսել ու սիրախօսել իրարու հետ Էսթրանթո լեզուաւ: Ինչպէս կը վկայէ այս համագումարին ներկայ գտնուող անձ մը. «Էսթրանթոն փորձի դրուեցաւ պերճախօսութեան, բանաստեղծութեան, վիճաբանութեան, երաժշտութեան, զուարճախօսութեան ու սիրաբանութեան կողմանէ ու պակաս չգտնուեցաւ» Իրիկուն մը Մոլիէրի «Բոնի Ամուսնութիւնը» ներկայացուեցաւ, որուն կը մասնակցէին վեց տարբեր երկրներէ եկող անձինք: Երեքը կ'ընէին: Կ'ընէին մին Իտալացի էր, միւսը Ռուս, իսկ երրորդը Շուէտացի: Ներկայացման

մասնակցող արտերն էին Անգլիացի, Պէլճիզացի, Նորվեգիացի, Եւրոպացի: Կ'ընէին որ Կաթոլիկ եկեղեցւոյ մը մէջ պաշտօնաւոր Էսթրանթո լեզուաւ կատարուեցաւ մատմար: Զմոռնանք ինչեւ հոս թէ Կաթոլիկները զոտ կրօնական հանգէս մը կը հրատարակեն Էսթրանթո լեզուաւ, «Էսթրանթո Բարոյիցա»:

Ձանաք այժմ որոշ գաղափար մը կազմել արուեստակերտ այս լեզուն հիմնական սկզբունք վրայ, օգտուելով Ամերիկեան մի քանի հանգեցնելու մէջ վերջերս հաստատուած կարգ մը յօդուածներէ:

Մեծ սկզբունքը որմէ առաջնորդուեցաւ Տր. Ջամէնօ Էսթրանթոյանարիւր իր բոլոր աշխատութեանց ընթացքին էր, Ջեմել ինչ որ եւրոպական լեզուներէն քիչերուն կամ մէկ հատին առանձնայատուկ է, իսկ ՊԱՆԵԼ ինչ որ հասարակաց է ամենուն կամ չատերուն: Հետեւաբար, արդէն իսկ գոյութիւն ունեցող նիւթերով չինուած լեզու մըն Էսթրանթոն ու ոչ թէ նոր ստեղծում մը: Հիմա կրնանք տեսնել թէ ինչ աստիճան կը դիւրանայ Էսթրանթոն այս տիրող սկզբունքին շնորհիւ: (Լոյս)

(Շարունակելի)

«ՆՈՐ-ՀԱՆԻՏՈՐ»

Նախաձեռնուած ըլլալով Փարիզի Հ. Յ. Դ. Ուսանողական Մարմնի կողմէն, Նոր-Հանդէսը պիտի ծառայէ ծանօթացնել հայոց մասին օտար լեզուով լոյս տեսած կարեւոր աշխատութիւնները եւ ամփոփ անգլիկաներէն եւ տեսութիւններ տալ միջազգային հասարակական եւ քաղաքական յիշատակութիւններու եւ մասնաւորապէս հայկական հարցի եւ կեանքի իրականութեան մասին:

Կը հրատարակուի ամբար երկու անգամ եւ բաժնեգրին է տարեկան 15 ֆր հասցէ՝ Տիար Ս. Միկայելեան 6, փողոց Պէռիօլէ, 6 Բ. Րիժ

Ի ԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ատորիանուպոլսոյ մեծ հրդեհէն այրած Հայոց եկեղեցիին վերաշինութեան կը ձեռնարկուի Պատրիարքարանը ճարտարապետ Տ. Մէլիտոնեանը շրկած է քըն-նելու այրած եկեղեցւոյն հիմքը եւ ըստ այնմ պատրաստելու նորին յատակագիծերը:

— Գանրիաէն կրկին բողոքագիր մը հասած է Պատրիարքարան, Հիւրմուղեան Գեորգ քահանային դէմ, որ եկեղեցւոյ գործերը խանգարելու պարճաւ կ'ըլլայ, ընտրուած խնամակալութիւնը չը ճանչնար ուստի խնդրեր են որ այս քահանան հրապարակ կ'ընէ:

Բայց խնդրի է թէ Պատրիարքարանը զանի ու՞ր շրկէ, երբ ինք ճանկաստան դառնալ չուզեր, իսկ արտասահմանի մէջ տեղ չէ մնացած որ այդ մարդէն ժողովուրդը զըռուած չըլլայ:

— Վանի ոսկերիչներէն Տ. Յովհաննէս Պօրալանճեան ոսկերչական գեղեցիկ գործ մը չինած է որ 200 ոսկի կը գնահատուի. գործը արծաթեայ ոսկեզօծ եւ նկարուն գրելու առարկաներէ կը բաղկանայ եւ ծաղկեփունջի մը երևոյթը ունի եզեր:

— Տիգրիս հրատարակուող «Կայծ» եւ «Ալիք» թերթերը (երկրորդը Դաշնակցականներու օրկան) դադարած են Ընդհ. Նահանգապետի հրամանաւ մինչեւ որ զինուորական գրութիւնը վերնայ:

— Միւս կողմէ տնային վարժուհի Պ. Վարդանյոյ Նահանգապետէն թոյլտուութիւն խնդրեր է Տիգրիսի մէջ հայերէն լեզուով իր խմբագրութեամբ ա-

երկիւղալի հարցում մըն էր: — Մի՛ մտածէք, սիրելի բարեկամս, յարեց Աւագակապետը: Զեր կեանքը վտանգներու չ'իմ ենթարկեր...:

— Ինչո՞ւ ասանք խօսքեր կ'ընէք, առարկեց Մոնթը:

Ու պատմեց թէ վարդապետին անուներ վանական էր, թէ մեծ գործեր ըրած էր Յեղափոխութեան արիւնշալի օրերու մէջ եւ թէ սպաննուած էր Վանի կոտորածին առթիւ:

Աւագակապետը հասկցաւ թէ այդ մեալ կերպարանքով մարդը չ'էր փոխուած... դարձեալ առաջնահազադանայի ու արիասիրտ Մոնթնէր եւ կրնար գործել ամենայն անձնութեան թեմով:

— Վանական ու՞ր թաղուած է, հարցուց Աւագակապետը:

— Ա՛խ, անշուք տեղ մը. պատասխանեց Մոնթը: Քարի մը կտարն քանգամ չը կայ անոր հողին վրայ: Թեպետեալ տարի մ'առաջ աշխատեցան մահաբան մը գնելու, սակայն կառավարութիւնն իմացաւ ու անմիջապէս արգելեց: Հիմակ գերեզմանին քովէն անցնելն անգամ կասկածելի է:

— Երթանք ընդհատեց կրօնաւորը: Զալի ժամանակ է: Դուք անօթի ըլլալու էք:

Աւագակապետը առարկութիւն մը չ'ըրա. այլ հետեւեցաւ կրօնաւորին ու Մոնթնէ, որոնք փոխանակ մեծ դռնէն երթալու, պարտեց մը մտան ու անկից խռց մը ապաստանեցան:

— Արիկա իմ խուցն է, մրմնաց Մոնթը:

— Սպասեցէ՛ք, ես հիմակ ճաշը կը պատրաստեմ ու հոս կը բերեմ, նկատել տուաւ կրօնաւորը ու գնաց:

— Զր յիշեցիք ո՞վ ըլլալ, անանկ չէ՞, թոթովեց Աւագակապետը:

— Ո՛հ, չէ՛... մրմնաց Մոնթը:

— Ինչո՞ւ համար... միթէ՞ Վարդայ Վանքը գտնուած միջոցիդ, չը տեսա՞ք զիս... շատ գիշերներ միասին չը պառկեցանք:

— Տէր Աստուած... ո՛հ, այո՛, յիշեցի՛ք, յիշեցի՛ք... դուք Ներսէս Արծրունին էք... դուք Աւագակապետն էք... բայց ուսկի՞ց կուգաք... ու՞ր էիք...:

— Ժամանակ չէ՛, սիրելի Մոնթս: Աւելի աղէկ է յարմար առիթներու սպասել, Բաւական է որ զիրար գրտանք, բաւական է որ լաղզը մեր քայլերը մինչեւ հոս առաջնորդեց: Կը մնան մեր առջին աւերակ աշխարհը մը ու նորիակապ նպատակ մը: Հոգ չէ՛, անյիշատակ գերեզման մ'ունե-

նանք... բայց վրէժնիս լուծած իյնանք մեր պաշտելի հողին գիրկը:

— Աւագակապետը խօսակցութիւնը ընդհատեց, որովհետեւ բարի կրօնաւոր մեծկակ սկուտեղի մը վրայ մածուն, սեր, կարագ ու թարմ պտուղներ դրած՝ ներս մտաւ:

— Կը ներքէ որ տաքուկ կերակուրներ չ'ունինք, բարեկամս: Նկատել տուաւ կրօնաւորը: Եթէ առաւօտ ըլլար, պիտի կրնայի բան մը պատրաստել:

— Օ՛հ, բարեկամներս, ընդհատեց Աւագակապետը, մի՛ նեղուիք... գիտեցէ՛ք որ օր մ'անօթի, օր մը կուշտ մարդուն համար չոր հացի կտորն անգամ շատ է:

— Ա՛խ, իրաւունք ունիք... ո՞վ զիտէ՞ որչա՞փ տառակաւքի օրեր անցուցած էք, վրայ բերաւ կրօնաւորը՝ մորթուած չ'իշտով մը:

Աւագակապետը ճաշեց, Յետոյ Մոնթը ներքսնեկալը մտաւ ու քիչ մ'ատին քնացաւ:

Երբ արթնացաւ, տեսաւ որ Մոնթը ներքսնեկալին մէկ անկիւնը կը կտուած՝ զինքը կը գիտէր:

— Ինչո՞ւ չէ՞ք կրնար ըմբանալ, մրմնաց Մոնթը: Հազիւ ժամ մ'եղաւ:

— Բաւական է... մարդուն հան-

գիստ քունը մէկ ժամ է, առարկեց Աւագակապետը: Թողունք ատրկաւ ես այս գիշեր կուգեմ մէկնիլ...

Մեկնիլ... բացաքանջեց Մոնթը:

- Այո՛:
- Դէպի ու՞ր:
- Քաղաքը:
- Պէտք ունի՞ք ինձի:
- Առ այժմ ո՛չ. սակայն երբ պիտք ունենամ, պատրաստ էք:
- Ամենայն սիրով:
- Խիստ լաւ: այդ մասին այլ չը խօսինք ըսաւ Աւագակապետը:
- Արդարեւ, գիշերուան ժամը չորսին մօտ, Աւագակապետը Մոնթին առաջնորդութեամբ կղզիէն դուրս ելաւ փոքրիկ ու նեղ ճամբէ մը, որ ջուրով պատած էր եւ հազիւ կը նշմարուէր լուսնի փաղկուն շողերուն տակ:
- Աստուած քեզի հետ ըլլա՛յ... մրմնաց Մոնթն ու վերադարձաւ:
- Աւագակապետը ծովափէն քիչ մը հեռու գտնուող ճամբուն վրայ ելաւ ու նկատ արագ արագ գէպի քաղաքը յառաջանալ:

(Շարունակելի)

մենորեայ թերթ մը հրատարակելու Պաշար անունով :

— Վրաց թեմի քանի մը քահանաներ խնդրագրով մը փոխարքայէն խնդրեցին որ մահուան պատիժը վերցուի : Ռուսաց Սինդը կղերին այդ տեսակ քաղաքական խնդիրներու միջամտութիւնը քննարկար համարելով : հրամայիր է նոյն թեմի եպիսկոպոսին որ այդ խնդրագիրը ստորագրող քահանաները ներգրծեն և եթէ չը գլխան, արգիւն զանոնք քահանայադուծելէ և հոգևոր դատի ենթարկել : [Ինչ մոյկնանդութիւն]

— Տեղույս ազգ : երկսեռ վարժարանի ուսուցչական մարմինը արգէն մասամբ կազմուած է և քանի մը օրէն կամրոջացուի : Այժմ պաշտօնի կոչուած են Տ. Տ. Խուչպուլեան տնօրէն, Բեօլեան Մարդարեան, Տիկին Ունճեան նախակրթարանի համար և Օր. Եայլեան մանկապարտէզի համար :

ԹԱՏՐՈՆ

Վարդապետական կարօտելոց ի նպաստ այս երեկոյ Սաեմինէնի տրահին մէջ պիտի ներկայացուի ԱՐՇԱՒ. Բ. ողբերկութիւնը և զանաւոր մը «Մասիս» թատերասիրաց խումբին կողմանէ : «Արաքս» նուագախումբն ալ պիտի մասնակցի այս երեկոյթին նուագածութեամբ : Վերջինը զուարթ ժամեր անցնել տալ կը խոստանայ : հանդիսականներուն, որոնք ինչ բարեգործական պարտք մը հատուցած ըլլալու և թէ գողտրիկ երեկոյթ մը վայելած լինելու գոհունակութեամբ պիտի մեկնին սրահէն :

ՀԱՎԱՏՈՒՄ

ԹԻԻՐԲԻԱ ՎԷ ՊՈԽԵԱՐԻԱ

Շու սըրա իքի հիւքիւմէթ պէյնիստէ միւնասիպէթ բէք կէրկիւնէյիյի տիր : Պապը Ալի Բուս մէնէյսինտէ տօթանէ միւտալէյէ իթմէք թէչպպիւսինտէ իքէն, քէնտիսի Պուկալիս իլէ թուլուլմագ հալինէ կէլտի : Շու սօն հաֆտա զարֆընտա Պապը Ալի իքինճի տէֆա օլարագ Պուկարար ալէհինտէ տէվլէթլէրէ նօթալար վէրիյէր : կէչէն կիւն պուկար գօմիթէլէրին եէնի ամէլիաթա սիւլիւք իտէճէկիստէն աղլաշտը, էվլէքի կիւն եէնի պիր նօթա իլէ Պուկարիանըն սինօր պօյունա չօգ ասքէր տօլարմասընը պէյան իտէրէք, նակհան պուկարար թիւրք թօրաղընա հիւքիւմ իտէճէքլէր տէյուպ, տէվլէթլէրին տըգգաթընը ճէլպ իթտի : Միւ-

նասէպաթըն կէրկիւնիկի Մ. Նաչովիչին իսթիֆտ իտուպ, Սթանպօլտան չէքիւլպ կէլմէսինէ սէպէպ օլտու Մ. Նաչովիչէն թիւրքօֆիլ պիր պուկար տառ օլունմուշ իքէն, նիհայէթ Պապը Ալի իլէ պարընմատը : Պապը Ալի վէ Սօֆիա գապինէսի պուտէրէճէ կէրկիւնիկի Սուլթանըն րուհաթընը սէլպ իթմիշ օլմալը տըր քի՝ Նէճիպ Մէհմէթ Բրէնսին նէզտինէ կէօնտէրիտի Մէհմէ շիմտի Մարիէնպարտա պուկուրիյօր Բրէնս Մ. Բէթրով տախի չաղըրտը : չու հալտէ գարարը գաթի օրատա վէրիլէճէք տիր :

ՏԱԽԻԼԻԷ

Տախիլիյէ նաղըր Մ. Բէթրով Պուկարիանըն պիւթիւն Ուրբալթիթլէրէ չու մաալտա պիր եէնի էմիրնամէ կէօնտէրիյ տիր :

«Պիր շէհիրտէն տիկէր շէհիրէ սիւրիւլէն ատաւար իչիւն էօյլէ թէտպիր թուլունը քի՝ պէնիմ էմիրմ օլմագսըղըն կէրի կիթմէսինէր : Վաթանքէրվէրիք իսի իլէ բարա թօրլայնար հագգընտա բէք տըգաթլը օլուն անլէրի հապս իտուպ մուհաքէմէյէ վէրինիլ : Թէէքիտէն էմր իտէրիմ, բարա թօրլամագ իչիւն քէօլէրէ չըգանլարա գարչը բէք շիտտէթլի տալրանընքի՝ էհալիի պուկար գալմընա մէնտուպ օլմայնարա գարչը թէչլիլ իթմէսինէր : պու կիպի քիմսէլէրէ մէյտան վէրմէք միլլէթէ այըպ կէթիրիր :»

— Ահօլու ֆէլագէթգատէլէրինէ Պուրկաղատան հէր կիւն 1500 քիւլ էքմէք կէօնտէրիւպ պիրէր բարչա բէնիլի տաղըրլիյօր ըմըշ : եագընտա ասքէր կիպի սըճագ եէմէք տախի վէրիլէճէկի միմուլ տըր :

— Վիւքէլա ըյիլի Մ. Բէթրով ֆէլա Բրէնսին տալթի իլի Մարիէնպարտա եանի Բրէնսին նէզտինէ կիթրի, Շու սըրա Պուկարիա աֆագը սիյասիյէսինտէ էհէմիյէթլի պուկուրար հըսս օլընմասընտան նաչի Բրէնս հագրէթլէրի քէնտի պաշ միսիսթէրի իլէ կէօրիւլիպտէ թալիմաթ վէրէճէք կէօրիւնիյօր :

ԲՈՒՍԻԱ

Էվլէտէն օլընան թէտպիրաթ իւղրէ, պիր թագըմ Մաքէթոնիալըար վէ մէքթէպիլիէր սօն չարչամպա սապահը կալաց շէհրինէ կիտուպ, էհալիի Բուլարա գարչը թէչլիլ իտէրլէր : էօյլէտէն սօնրա իպարիլտէն վարօրլէ ուլահ պանտերասը վէ պանտա-միւլիքա էօնտէն պիր չօգ կէնճլէր տախի կէլէրէք, սօգաղարտա նիւմայիյաթա պաշլարար : Պուգրէչտէն կէլէն թը-

րէնտէն տախի պաղը Մաքէթոնիալըար չըգարագ պաղչէտէ պիր միթիւնի թէչքիլ իտէրլէր : Ալէֆիլի նուլթարտան սօնրա հիտտէթլէնմիշ գալապալըգ սօգաղարա գօյուպ Բուս տիւքեանլարընա հիւքիւմ իտէր, գըրար, տէօքէր, րաստ կէլէն Բուսլարը տէօկէր, գալապալըգ Բուս գօնսօլոսհանէսի էօնիւնէ կիտուպ ճամլարը թաշլար եուհա պաղըրըր :

Խայը ուլիւնսըղըգլարտան սօնրա նիւմայիչիլէր՝ կիթմէք սաաթը կէլմէսինտէ վարօրա բիւնէրլէր վէ «Եաչաղըն Բուսանիա» նէտալարը իլէ ըվօլլէրլէր բաթլատարագ կիտէրլէր :

60 խանէ վէ տիւքեան խարապ օլմուշ տըր : Բօլիսիա միւտալէլէ իթմէմիշ տիր :

ԲՈՒՍԻԱ

Մէմալիքին հէր թարաֆընտա հէր կիւն գանլը մէնդարէլէր էքսիկ օլմայօր : իսթիւլալըար էլի իլէ թէքար իքի ժէնէրալ էօլտիւրիւտի : Օտեստա եէնի գարըչըգլըգ չըգուպ, 15000 իչճի նիւմայիշ իթտիլէր, ասքէր էհալի իւղէրինէ աթէշ իթտի 81 քիչի էօլտիւ վէ 250 քիչի եարէլէնտի ասքէրտէն տախի 10 քիչի տիւշտիւ : Օտեսա վալիսինի էօլտիւլմէք իչիւն սէրայ էօնիւնտէ կէչիւմէքտէ օլան պիր կէնճ գըղ աթաճաղը պօմպայը էլինտէն տիւլիւրուպ քէնտիսի աղըրճա եարէլէնտի :

— Վիւքէլա ըյիլի Մ. Սթօլիբէն օլան սուի գասթտան տօլայը Չար պա թէլէկրաֆ թէէսիւֆիինի պէյան իթմիշ վէ եարէլէնտէ էվլատարընա սըհէթ թէմէնի իթմիշ տիր :

— Հիւքիւմէթին ըհսմի կաղէթասը պիր պէնտի մախսուլէ՝ պու ճիւնայէթլէր իլէ իսթիւլալըար հիւքիւմէթի գօրգուտա մաղար, հիւքիւմէթ հէմ անլէրի թէտիպ իտէճէք վէ հէմտէ քէնտի ճըղմըշ օլտըղը բօկրամընը իլէրի կէօթիւրէճէք, տէյօր :

— Չար պիր իւքաղլէ՝ հիւքիւմէթէ եախտ իմէրաթօրլըգ թախթընա այիտ օլան արաղիլէրին քէօյլիլէրէ սաթըլմասըն էմր իթմիշ տիր : քէյլիլէր զըրաթ պանգալարընտան իսթիլգրաղ իտէրէք, եախտ իքօթէք թարիլի իլէ պիրէր մըգտար թօրագ ալաճագլար :

Պու թէտպիրլէ հիւքիւմէթ քէօյլիլէրի իսթիւլալըարըն աղուչընտան գուրթարուպտէ քէնտիսինէ պէնտ իթմէկ իսթէյօր : Պագալըմ մուվաֆագ օլաճագ մը :

— Բիկատա պիր պօմպա ֆապրիգասը քէչի օլընարագ, ասքէր խանէի իհաթէտէն վէ խայը սիւհալ աթտըգտան սօնրա իչէրտէ եալընը պիր գատըն վէ պիր

էրքէք էօլիսի պուլմուշ տըր :

— Թիֆլիզտէն Բէթրապուրկա պիւտիւրիտիկի իւղրէ, օրատա պիր չօգ զապիթլէրտէն միւթէչէքի պիր կիլի շէրքէթ պուլընտը անլաշըարագ զապիթլէրտէն պիր թագըմը թուլունմուշ մէչքիւր շիւքթէթ իքի ժէնէրալ տախի տախիլ իմիշ : Շիմտիլիք թալիսիլաթ եօգ տըր :

— Սօն հաֆթա զարֆընտա 81.0 եէրտէ հիւքիւմէթ, եախտ շիւքթէթ սանտըղարընտան վէ մէմուրարը էլինտէն ճէպրէն պէօյիկ մէպաղար զասպ օլունմուշ տըր : իսթիւլալըար պու թալիլէ իլթիլ օլան բարայը թէտարիք իտէյօրլար :

— Բէթրապուրկտան Պէրլինէ պիւտիւրիտիկի իւղրէ, Չարըն ըյայսէթի ալթընտա պու կիւնլէրտէ պիր պէօյիկ մէճիս օլաճագ : մէճիստէ իմէրաթօր ալիէսի, սէրայ ըհճալը, չօրաի տէվլէթ աղալարը հաղըր օլաճագլար ըմըշ : մէճիս էհալիւնի սէրպէստիյէթ արգուլարընը թէմամէն իճրա իթմէք խուսուսընը միւլէքէրէ իտէճէք :

— Հօմէլտէ Եահուտիլէր վէ Բուսլար պէյնիստէ կէճէ վագթը պիր միւտատէմէ օլմուշ իսէտէ, թարաֆէյնտէն հիւ պիր թէլէֆիւթ օլմագսըղըն բօլիսլէրին միւտալիլէսի սայէսինտէ թէսսքին օլունմուշ :

ԹԻԻՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 3 Յունիս

ՋԱԽԻՐԷ

ՊՈԽԵԱՐ	
Վալոն	53-57 լիպ. 8-9 50
Արապա	52-58 լիպ. 7/10. 60
ԱՐԲԱ	
Վալոն 100 քիւլ	10. 10/25
Արապա	42-47 լիպ. 6/6-40
ԵՈՒԼԱՅ արապա	33/36 լիպ. 4/4-80
» 100 քիւլ	10. 50.11
ՋԱՎԱՐ արապա	52/57 լիպ. 7/7.40
ՅԱՍՈՒԼԵԱ արապա	100 քիւլ 18/20
ԲԱԲԻՑԱ 100 քիւլ	— եօգ
Արապա 100 քիւլ	եօգ
ՏԱՐԸ արապա	6. 6/40
ՔՈԼՈՉ արապա	55-60 լիպ. եօգ
ՄԻՍԻՐ 57-58 լիպ.	առապա եօգ
» 100 քիւլ	եօգ
Կիւնտէ վալոն 3/2 վէ	300-350
արապա կէլմէքտէ	վալոն մուամէլէսի նաթօլէօն 20 ֆր. արապա մուամէլէսի նաթօլէօն 20. 20

ՊԱԳԱԼԻԹԷ

Վարնա բիսպասընտա պագալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, ալթուն ֆրանք իլէ :	
ԳԱՂՎԷ	2.15/ 2.25
Շէֆէր նէմցէ	.83
Շէֆէր քէսմէլ սանտըգ	42
Բիրինճ ճէնօվա չուվալը	42.
» Ֆիլիպէ »	35
» Ինկիլիլ »	29. 50.
Բիգօ »	49.
ԿԱՉ Սանտըղը	11
Չէթիւն եաղը քիւլ	80-95
ԳՈՒՐՈՒ Իւղիւմ	32
Եուլմուրթա 100 առէթի	4. 07

Одговорникъ А. Курбетиянъ

не читана Д. Тодоровъи С-не—Варна